ՊԱՏՄԱԲԱՆԱԿԱՆ

ԱՐՏԱԿ ԳՆՈՒՆԻ

ՀԵՏԱԽՈՒՋԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԵՒԱՆԻ ԹԵՐԱԿՂԶՈՒՄ

Սեւանի թերակղզին եւ նրան անմիջականորեն հարող տարածաշրջանն աչքի են ընկնում հնագույն եւ միջնադարյան հուշարձաններով: Այստեղ են գտնվում այնպիսի հանգուցային հուշարձաններ, ինչպիսիք Լճաշեն եւ Մեծփի ամրոցներն են: Հնագիտական նյութն այս տարածաշրջանի մշակութային զարգացումը արձանագրում է սկսած Ք. ա. Դ-Գ հազարամյակից մինչեւ միջնադար[1]: Սեւանի կղզին (թերակղզին) եւս հանդիսացել է հայ մշակույթի կենտրոններից մեկը: Այստեղ տեղադրված վանական համալիրն իրավամբ համարվում է հայ ճարտարապետության հոյակապ նմուշներից մեկը:

Սեւանի վանական համալիրը բաղկացած է երեք եկեղեցիներից: Նրանցից երկուսը՝ հարավարեւելյան լեռնալանջին կառուցված Ս. Աստվածածին եւ Սրբ. Առաքելոց եկեղեցիները, կառուցվել են 874 թ. Մաշտոց Եղիվարդեցու եւ Սյունյաց Մարիամ իշխանուհու կողմից, ինչի մասին են վկայում Մարիամ իշխանուհու շինարարական արձանագրությունը Սրբ. Առաքելոց եկեղեցու թմբուկի արեւելյան նիստին եւ Ստեփանոս Օրբելյանի համապատասխան հիշատակությունը: Սրբ. Առաքելոց եկեղեցու կառուցման մասին Ստեփանոս Օրբելյանը հիշում է մի ավանդություն, ըստ որի՝ Մաշտոց Եղիվարդեցուն եկեղեցու կառուցման վայրը երազի մեջ ցույց են տվել տասներկու առաքյալները, որոնք, լճի վրայով քայլելով, հասել են կղզի[2]: Հատկանշական է նաեւ Ս. Աստվածածին եկեղեցու արեւմտյան կողմում կառուցված գավիթը, որը հայտնի է փայտե սյուների փորագիր փայտյա խոյակներով[3]: Ս. Աստվածածին եւ Սրբ. Առաքելոց եկեղեցիները, որ Սյունիքի ճարտարապետական դպրոցի վառ նմուշներից են, իրենց հատակագծային ձեւերով եւ ծավալատարածական լուծումներով վերարտադրում են վաղ միջնադարում մշակված եռաբսիդ կենտրոնագմբեթ փոքր տաճարների տեսակը: Երկու եկեղեցիներն էլ դրսից եւ ներսից ունեն խաչաձեւ տեսք: Եկեղեցիները կառուցված են կոպտատաշ քարերից: Սրբատաշ քարերն օգտագործվել են միայն առավել կարեւոր մասերում: Եկեղեցիների կառուցման ժամանակ կիրառվել են մի շարք նոր մեթոդներ: Երրորդ եկեղեցին Ս. Հարություն եկեղեցին է, որն, ի տարբերություն նախորդ երկուսի,

---

1 **Ն. Մնացականյան**, Լճաշենի նյութական մշակույթի զարգացման հիմնական էտապները. «Դատմա-բանասիրական հանդես», 1965, հ. 2, էջ 95-97. **Գ. Միքայելյան**, Սեւանի ավազանի կիկլոպյան ամրոցները, «Հայաստանի հնագիտական հուշարձանները», հ. I, Եր., 1968, էջ 13-18:

2 **Л. Меликсет-Бек**, Новооткрытая надпись на Севане от 874 г., "Памяти академика Н.Я.Марра", М.-Л., 1938, էջ 413, **Ս. Մնացականյան**, Հայկական ճարտարապետության Սյունիքի դպրոցը, Եր., 1960, էջ 27-29, **Ստեփանոս Օրբելյան**, Սյունիքի պատմություն, Եր., 1986, էջ 175-176:

3 **Ս. Մնացականյան**, նշվ. աշխ., էջ 37. **Ե. Լալայան**, Սեւան, «Ազգագրական հանդես», գիրք XVII, հ. 1, Թիֆլիս, 1908, էջ 74:

գմբեթածածկ սրահի տեսք է ունեցել: Վ. Հարությունյանն այս կառույցը համաժամանակյա է համարում առաջին երկուսին, իսկ Ս. Մնացականյանը նրա կառուցումը վերագրում է Սարգիս կաթողիկոս Սեւանցուն (992-1019)[4]:

Վանական համալիրն իր մեջ ներառում էր մի շարք դարաժամանակյա շինություններ՝ վանահոր կացարան, ուխտավորների համար նախատեսված սենյակներ, խցեր, արտադրական կառույցներ, որոնք այս կամ այն չափով պահպանվել էին մինչեւ Ի դարի սկզբները[5]: Կղզու արեւելյան հատվածում հիշատակվում են «Մաշտոցներ» անվանվող խցիկները, որտեղ, ըստ ավանդության, ճգնել է Մաշտոց Հայրապետը[6]:

Բնական է, որ գտնվելով Դվին-Դարտավ կարեւոր ռազմավարական ճանապարհի անմիջական հարեւանությամբ՝ վանական համալիրն իր գոյության ողջ ընթացքում արտադրական խոշոր կենտրոն է եղել[7]: Կղզու արտադրական կենտրոն լինելու մասին են վկայում ոչ միայն մատենագրական տվյալները, այլեւ 2008 թ. շինարարական աշխատանքների ժամանակ պատահականորեն հայտնաբերված ձիթհանի քարը[8]:

Գտնվելով ռազմավարական կարեւոր հանգույցում՝ Սեւանի կղզին հաճախ կարեւոր դեր է խաղացել հայ ժողովրդի պատմության մեջ, ուստի եւ բազմիցս հիշատակվում է մատենագրական աղբյուրներում: Սեւանա կղզու ամրոցը, փաստորեն, հանդիսացել է մի մեծ պաշտպանական գոտու կենտրոն, որն իր մեջ ընդգրկել է ինչպես բուն կղզու ամրությունները, նույնպես եւ առափնյա մի շարք ամրոցներ[9]: Ցավոք, Սեւանա կղզու կառույցների պաշտպանական գործառույթների կամ հեթանոսական շրջանում նրա խաղացած դերի մասին նյութի պատկերացում կարող ենք ունենալ մեծ մասամբ միայն գրավոր աղբյուրներից: Օրինակ՝ Մ. Սմբատյանցը նշում է, որ կղզու արեւմտյան ափին՝ ջրի մեջ, երեւում են պարիսպների մնացորդներ[10]:

* * *

2009 թ. Սեւանի Վազգենյան հոգեւոր դպրանոցի հարավային պարսպի կառուցման ժամանակ բացվեց արեւելք-արեւմուտք ուղղվածությամբ մի պատ:

---

4 Կղզու տարածքի ճարտարապետական եւ հնագիտական հուշարձանները բազմիցս արժանացել են հետազոտողների ուշադրությանը դեռեւս ԺԹ դ. առաջին քառորդում, երբ վանքի ճգնավոր Մելքոն Տփխիսեցին բացել եւ մաքրել է Ս. Հարության փաճարի հիմքերը: Այս մասին տե՛ս **Մ. Սմբատեանց**, Տեղագիր ծովազարդ Գեղարքունի գաւառի, որ այժմ Նոր Բայազիտ, Վաղարշապատ, 1895, էջ 121: Եկեղեցական կառույցների եւ նրանց ճարտարապետության մասին տե՛ս **Ս. Մնացականյան**, նշվ. աշխ., էջ 27-42, **Վ. Հարությունյան**, Հայկական ճարտարապետության պատմություն, Եր., 1992, էջ 214-215. **Ե. Լալայան**, նշվ. աշխ., էջ 72-75, 77-85. **Н. М. Токарский**. Архитектура Армении IV-XIV вв., Е., 1961, էջ 227-229:

5 **Ե. Լալայան**, նշվ. աշխ., էջ 74:

6 **Ղ. Ալիշան** , Ցուշիկք հայրենեաց Հայոց, հատ. I, Վենետիկ, 1921, էջ 418, **Մ. Սմբատյանց**, նշվ. աշխ., էջ 121:

7 **Ն. Մանանդյան**, Հին Հայաստանի գլխավոր ճանապարհները ըստ Պեւտինգերյան քարտեզի, Եր., 1936, էջ 179-189, նույնի, О торговле и городах Армении в связи с мировой торговлей древних времен, Е., 1954, էջ 168. **Ստեփանոս Օրբելյան**. Սյունիքի պատմություն...., էջ 177-179, **Սիմեոն Երեւանցի**, Ջամբռ, Եր., 2003, էջ 397, նաեւ ծանոթագրությունը՝ էջ 525:

8 **Ստեփանոս Օրբելյան**, Սյունիքի պատմություն..., էջ 175-176:

9 **Ս. Մնացականյան**, նշվ. աշխ., էջ 198-199, **Ն. Մանանդյան**, նշվ. աշխ., էջ 186, 189:

10 **Մ. Սմբատյանց**, նշվ. աշխ., էջ 29, 110. հմմտ. **Ս. Մնացականյան**, նշվ. աշխ., էջ 197-198: Ի դեպ, Մ. Սմբատյանցը ենթադրում է, որ այս պարիսպները պետք է կառուցված լինեին դեռեւս Քրիստոսից երկու հազարամյակ առաջ, սակայն տվյալ դեպքում նա առաջնորդվում է ավելի շուտ տեսած պարսպաշարի քարերի մեծությամբ եւ ավանդությամբ:

Նույն տարի Վազգենյան դպրանոցի տեսուչ հայր Գեորգ աբեղա Սարոյանի հրավերով մենք ուսումնասիրեցինք բացված տարածքը[11]:

Այն գտնվում էր կղզու բլրի ստորոտում՝ հին լճափին: Շինարարական աշխատանքների ժամանակ կտրվել էր բլրի հյուսիսային լանջի մի հատվածը՝ առաջացնելով մոտ 3 մ բարձրությամբ ուղղահայաց կտրվածք (նկ. 1): Վերջինիս վերեւում լայն դարավանդ է: Շարքը բացվել է մոտ 12 մ երկարությամբ: Այն պահպանվել է 120-ից 230 սմ բարձրությամբ: Պարիսպը շարված է կոպտատաշ քարաբեկորներից եւ ունի բավականաչափ կանոնավոր տեսք (նկ. 2), սակայն դեպի արեւմուտք, մանավանդ պահպանված վերին հատվածում, այն ավելի կոպիտ է շարված, ընդ որում օգտագործված են տեղի ժայռաբեկորները:

Պատի պահպանված մասից արեւելք՝ կտրվածքի կենտրոնական հատվածում, հաստատագրված են ուղղահայաց շարված չորս ժայռաբեկորներ (նկ. 3): Չի բացառվում, որ սա որեւէ շինության կամ թաղումային կառույցի պատի անկյունային հատված է: Հենց այս հատվածում էլ նկատվում է հնագիտական նյութի առավել մեծ կենտրոնացում: Այստեղ հողն այրված է, ունի շագանակագույն գունավորում, հագեցած է մարդու (միջնամատի ֆալանգ) եւ անասունների ոսկորներով (այդ թվում՝ նաեւ այրված), խեցեղենի տարաժամանակյա բեկորներով[12]: Այստեղ հայտնաբերված են երկու մեծ կարասների եւ մեկ թաղարի բեկորներ, ինչպես նաեւ մի քանի փոքր անոթների առանձին բեկորներ (նկ. 4):

Կարմիր կարասի իրանի բեկորները ուռուցիկ զարդանախշերով են: Այս անոթն իր արտաքին տեսքով եւ պատրաստման եղանակով նմանվում է մ. թ. Գ-Դ դդ. նյութերին ու որոշակի զուգահեռներ ունի Ջաբարի բերդի եւ Շամիրամի նյութերում[13] (նկ. 5):

Հարթ կլորացող շուրթով կարմիր նուրբ թասի շրթնամասի բեկորը հատուկ է մ. թ. Գ-Դ դդ.[14]: Հատկանշական է, որ բեկորի կոտրվածքները հարթեցված են: Ամենայն հավանականությամբ, արդեն ջարդվելուց հետո այն հայտնվել է ջրի մեջ:

Հայտնաբերվեցին ավազախառն կավից պատրաստված կոպիտ օքրայազույն կարասի շրթնամաս եւ իրանի հատված: Անոթի պսակը կտրվածքում ունի սեղանաձեւ տեսք: Նմանատիպ շուրթով կարասները հայտնի են ԺԲ-ԺԳ դդ. հուշարձաններից, օր.՝ Դվին, Ծակաեղցի[15] (նկ. 7):

Թեք շուրթով, կոպիտ նստուկով, կոպիտ ձեռածեւի թաղար: Իրանի վերին հատվածում իրար տակ գտնվող ալիքաձեւ երկու փորագիր զարդագոտիները իրարից, ինչպես նաեւ

---

11 Նյութերն ուսումնասիրվում են ԵՊՀ հնագիտության լաբորատորիայում: Նյութը վերլուծելիս հեղինակին անգնահատելի օգնություն են ցուցաբերել Ի. Ղարիբյանը, Հ. Հակոբյանը, Գ. Կարախանյանը, Ի. Կարապետյանը, Հ. Օհանյանը, Հ. Մելքոնյանը, Ռ. Մկրտչյանը, Ք. Նավասարդյանը, որոնց հեղինակը հայտնում է իր խորին շնորհակալությունը:

12 Մարդաբանական նյութի բնորոշումը՝ Ռ. Մկրտչյանի:

13 **Հ. Օհանյան**, Շամիրամի անտիկ ժամանակաշրջանի բնակատեղիի պեղումները (1981-1987 թթ. պեղումներ). «Բանբեր Երեւանի համալսարանի», 1989, հ. 2, էջ 208-209, **Е. Асатрян**, Закари берд, 2005, XVII 1, 2, **A. Kalantaryan, G. Karakhanyan, H. Melkonyan, H. Petrosyan, N. Hakobyan, F. Babayan, A. Zhamkochyan, K. Nawasardyan, A. Harutunyan**. Armenia in the cultural context of the East and West (ceramics and glass of the IV-XIV centuries).Yerevan. 2009, p. 48, Խեցեղեն նյութի կավի բաղադրության ուսումնասիրությունը կատարել է ԵՊՀ հնագիտության լաբորատորիայի աշխատակից Ք. Նավասարդյանը: Խեցեղենի չափագրությունը՝ Ա.Դավթյանի:

14 **Կ. Ղաֆադարյան**, Դվին քաղաքը եւ նրա պեղումները, հատ. I, Եր., 1952, էջ 185, **A. Kalantaryan, G. Karakhanyan,**... նշվ. աշխ., աղ. 13 (3):

15 Տե՛ս **A. Kalantaryan, G. Karakhanyan,...** նշվ. աշխ, աղ. 32 (2). **Г. С. Есаян**, Материальная культура бассейна р.Агстев в раннем средневековье, Е., 1992, էջ 87, աղ. 27 (18):

անոթի վզից զարդվում են փոքրագիր ակոսներով: Անոթի մակերեսը մուգ շագանակագույն է, խիստ մրոտված, ասպառը՝ կարմիր: Նմանատիպ անոթներ հայտնի են Հայաստանի բազմաթիվ հուշարձաններից: Դրանք հանդես են գալիս՝ սկսած Թ դարից եւ գոյատեւում մի քանի հարյուրամյակ[16]: Հարկ է նշել, որ սույն անոթի բազմաթիվ բեկորները, ի տարբերություն վերը ներկայացված խեցեղենի, խիստ մրոտված էին եւ ենթարկվել էին բարձր ջերմաստիճանի ազդեցության:

Բացի խեցեղենի վերոնշյալ նմուշներից՝ կտրվածքի այս հատվածում հայտնաբերվեց Ք. ա. Բ հազարամյակի տեսքի անոթի բեկոր: Այս բեկորը ծածկված էր կրային նստվածքներով, ինչը վկայում է լճի հատակում երկարատեւ մնալու մասին:

Առանձին գտածոներ հայտնաբերվեցին նաեւ կտրվածքի արեւելյան հատվածից: Այստեղ գտնվեցին Ք.ա. Ա-Բ դդ. անոթի բաց օքրայագույն հիմքի կարմիր ներկած անոթների երկու բեկոր (նկ. 6), ԺԴ-ԺԵ դդ. ջնարակած խեցու բեկոր՝ երկրորդական օգտագործման հետքերով (նկ. 9), ինչպես նաեւ անհասկանալի նշանակության երկաթյա իրի բեկոր: Հատկանշական է, որ իրը, ենթարկվելով չափազանց բարձր ջերմաստիճանի ներգործության, գրեթե հալվել էր: Իրի վրա դիտարկվում են հալված ապակու եւ խեցեղենի փշրանքներ[17]:

Անտիկ խեցեղենի առկայությունը հուշարձանում պատահական չէ: Լճի ավազանն աշխույժ կերպով յուրացվել է Ք. ա. Ա եւ Ք.հ. Ա դդ.: Ավանդության համաձայն՝ այստեղ եղել է հեթանոսական սրբատեղի, որի տեղում Գրիգոր Լուսավորիչը կանգնեցրել է փայտյա խաչ[18]:

Սեւանի կղզու ամրոցը բազմիցս հիշատակվում է պատմական աղբյուրներում. նշվում է այդ կառույցի անառիկությունը եւ ամրությունը: Պատմիչներն այն անվանում են բերդ-կղզի, ինչից կարելի է եզրակացնել, որ ողջ կղզին հագեցած էր տարբեր տեսակի ամրաշինական կառույցներով[19]: Է դ. կամ Ը դարի սկզբներին արաբներին հաջողվեց գրավել ամրոցը միայն եռամյա պաշարումից հետո, այն էլ երբ նրանք լճից ջուր բաց թողեցին՝ պարանոց ստեղծելով ափի եւ կղզու միջեւ[20]: Այս դիպվածը Սեւանա կղզու գրավման առաջին վավերագրված դեպքն է[21]:

Հետագա ժամանակաշրջանում Սեւանա կղզին ավերածությունների է ենթարկվել ինչ-

---

16 **Ա. Քալանթարյան**, Ողոտնավանքի խեցեղենը. «Լրաբեր հասարակական գիտությունների», 1967, հ. 7, աղ. II (12), **Г. С. Есаян.** նշվ. աշխ, էջ 53, 55, նշվ. աշխ, 84, 107, 109, նույնի «Մակարավանքի խեցեղենը». «Պատմա-բանասիրական հանդես», հ. 1, 1983, էջ 226-227:

17 Երկաթյա իրի ուսումնասիրությունը՝ Ք. Նավասարդյանի:

18 **Մ. Ամբարյանց**, նշվ. աշխ., էջ 110, **Ե. Լալայան**, նշվ. աշխ., էջ 56, 68, **Վ. Հարությունյան**, նշվ. աշխ., էջ 215:

19 **Մովսես Կաղանկատվացի**, Պատմություն Աղվանից աշխարհի, Եր., 1969, էջ 248-249:

20 **Կիրակոս Գանձակեցի**, Հայոց պատմություն, Եր., 1982, էջ 58. «Սամուէլի քահանայի Անեցւոյ Հաւաքմունք ի գրոց պատմագրաց», Վաղարշապատ, 1893, էջ 85. Մխիթարայ Այրիվանեցւոյ Պատմութիւն Հայոց, Մ., 1860, էջ 51. **Մխիթար Անեցի**, Մատեան աշխարհավէպ հանդիսարանց, Եր., 1983, էջ 101. **Հովհաննես Դրասխանակերտցի**, Պատմություն Հայոց, Եր., 1996, էջ 96 (ի դեպ, Դրասխանակերտցին նշում է, որ սա կղզին գրավելու երկրորդ փորձն էր, տե՛ս անդ):

21 Մովսես Կաղանկատվացին եւ Մխիթար Այրիվանեցին արշավանքը թվագրում են 696 թ. (տե՛ս **Մովսես Կաղանկատվացի**, անդ, **Մխիթար Այրիվանեցի**, անդ), Ղեւոնդը՝ 701 թ. (տե՛ս «Պատմութիւն Ղեւոնդայ մեծի Վարդապետին Հայոց», Ս. Պբ., 1887, էջ 19-20), իսկ Սամվել Անեցին՝ 703 թ. (Տե՛ս **Սամուէլ Անեցի**, անդ): Այս հարցի շուրջ տե՛ս նաեւ՝ **Ե. Լալայան**, նշվ. աշխ., էջ 60. **Ս. Մելիք-Բախշյան**, Հայաստանը VII-IX դարերում, Եր., 1968, էջ 97-98:


4


1
3

պես թշնամիների կողմից, այնպես էլ բնական աղետների պատճառներով: 913 թ. Սահակ եւ Վասակ Սյունյաց իշխանները ապաստանում են Սեւանա բերդում, սակայն փախչում են այնտեղից: Արդյունքում ամրոցը գրավվում եւ թալանվում է արաբների կողմից[22]:

Ավանդության համաձայն՝ ԺԳ դարում, երբ փարաձաշրջանը ենթարկվում էր լեզգիական ցեղերի ասպատակություններին, մի ավազակախումբ խորամանկությամբ փորձում է գաղտնի ներխուժել կղզի, սակայն հայտնաբերվում եւ ոչնչացվում է վանականների կողմից[23]:

Հետագա դարերում փարաձաշրջանը թեպետ ավերվում է, սակայն աղբյուրներում Սեւանա կղզին չի հիշատակվում: Ըստ ԺԶ դարի անանուն ժամանակագրի՝ 1512 թ. Շահ Թահմազը «Գեղարքունու ծովն քանտել եղուր»[24]:

ԺԷ դարում փարաձաշրջանը ենթարկվում է ջալալիների ասպատակություններին, ինչի հետեւանքով վանական համալիրը կորցնում է իր նշանակությունը մինչեւ 1620 թ. Կարապետ եպիսկոպոսի վերականգնողական աշխատանքները[25]:

Վերջապես, կղզում գտնվող կառույցներն ավերվեցին 1679 թ. երկրաշարժի ժամանակ, երբ «մինչ զի կանթեղաց ձէթն եւ ջուրն ի միասին հեղաւ ի Սէվան կղզոջ յեկեղեցիսն»:

Այսքանով հանդերձ, հաշվի առնելով վերոնշյալ այրված թաղարի թվագրումը, պատերի վերաշինությունների առկայությունը՝ կարելի է նախնական ենթադրության հանգել, որ թերակղզու բլրի կտրվածքի այրված հորիզոնն առաջացել է 913 թ. դեպքերի ժամանակ: Բնական է, որ միայն հետագա համակարգված ուսումնասիրությունները կարող են հաստատել կամ հերքել այս վարկածը:

Ինչ վերաբերում է ԺԴ-ԺԷ դդ. ջնարակի գտածոյին, ապա տվյալ ժամանակաշրջանում Սեւանի կղզին հանդիսանում էր գրչության կարեւորագույն կենտրոններից մեկը՝ կոչվելով «սուրբ, առաքինեալ եւ անուանի»[26]:

Անկասկած, հուշարձանի հետագա ուսումնասիրությունները մեծապես կնպաստեն ինչպես փարաձաշրջանի հնագույն եւ միջնադարյան հուշարձանների բացահայտմանը, նույնպես եւ լույս կսփռեն հայ ժողովրդի պատմության մի շարք հարցերի վրա:

---

22 **Հովհաննես Դրասխանակերտցի**, Պատմություն..., էջ 230-232. **Ստեփանոս Օրբելյան**, Սյունիքի պատմություն, էջ 185-186. **Մխիթար Անեցի**, Պատմութիւն քաղաքին Յանուց. **Մխիթար Անեցի**, Մատեան..., էջ 115-116. **Մ. Չամչյանց**, Հայոց Պատմություն, Եր., 1984, հատ. 2, էջ 751-752: Ըստ Ե. Լալայանի՝ նշված դեպքերը տեղի են ունեցել 911 թ. անմիջապես առաջ: Ի դեպ, նա հիշատակում է մի ավանդություն, ըստ որի Սահակ եւ Վասակ իշխանների մայր Մարիամը հետագայում թաղվել է Սեւանա կղզում. (տե՛ս **Ե. Լալայան**, նշվ. աշխ, էջ 60):

23 **Մ. Սմբատյանց**, նշվ աշխ., էջ 151. **Ե. Լալայան**, անդ:

24 «Մանր ժամանակագրություններ», կազմ. Վ. Հակոբյան, հատ. I, Եր., 1951, էջ 146:

25 **Առաքել Դավրիժեցի**, Պատմություն, Եր., 1988, էջ 74-75, 201. **Մ. Սմբատյանց**, նշվ. աշխ., էջ 114. **Մ. Զուլալյան**, Ջալալիների շարժումը եւ հայ ժողովրդի վիճակը Օսմանյան կայսրության մեջ, Եր., 1966, էջ 183. **Ե. Լալայան**, նշվ. աշխ., էջ 60:

26 «ԺԵ. դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», կազմ. Լ. Խաչիկյան, մասն Գ., Եր., 1967, էջ 262, տե՛ս նաեւ անդ, էջ 414, «ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», կազմ. Լ. Խաչիկյան, մասն Բ., Եր., 1958, էջ 5, 156, 396: